

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբեր

2022թ.

© Գորիս Ջ

30.11.2022

ԿԱՊՈՒՅՏ ՎԱՌԵԼԻՔԸ ՀԱՍԵԼ Է ՄԵՂՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի՝ նոյեմբերի 29-ի Մեղրի աշխատանքային այցի առանցքում էր համայնքի գազիֆիկացման գործընթացի քննարկումը:

Համայնքապետարանում նախ կայացել է հանդիպում համայնքային իշխանությունների, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ ղեկավարության ու աշխատանքներում ներգրավված այլ մասնագետների մասնակցությամբ: Նշվել է, որ այս պահին կապույտ վառելիքից օգտվում է Մեղրի քաղաքի ութ ընտանիք, գործընթացը շարունակվում է, միայն, թե բաժանորդների կողմից ներկայացված դիմումների քանակն այնքան էլ մեծ չէ:

Մարզի ղեկավարը դրսում, բնակիչների հետ զրուցելով, փորձեց հետաքրքրվել այս պասիվության պատճառների մասին. մարդիկ նշում էին թերահավատությունը՝ հաշվի առնելով նախորդ անգամների փորձը...

Եվս մեկ անգամ հիշեցնենք, որ Մեղրի, Ագարակ քաղաքների ու Լեհվազ գյուղի գազիֆիկացման գործընթացն ավարտվել է, ու բնակիչներն անհատական տներում ու բազմաբնակարան շենքերի բնակարաններում բնական գազ ունենալու համար կարող են դիմում ներկայացնել, նաև իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները ստանալ Մեղրու գազի նախկին գրասենյակում:

Ռոբերտ Ղուկասյանը եղավ նաև առաջինը գազիֆիկացված բնակարաններից մեկում՝ գործարկելով գազասարքը:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/11/30/Meghrin_gazifikacvel_e/

29.11.2022

Կյանքի ուղեգիր ստացավ Կապան-Ճակատեն այլընտրանքային ճանապարհը

2021 թվականի նոյեմբերին Ադրբեջանն անցակետ տեղադրեց Ճակատեն տանող Մ-17 ճանապարհին, որը մարզկենտրոնը կապում է Ճակատեն, Շիկահող, Սրաշեն, Ծավ, Ներքին Հանդ, Շիշկերտ բնակավայրերին: Փաստորեն փոքրիկ մի լեռնաշխարհ կտրվում էր արտաքին աշխարհից: Ճիշտ է, Ճակատեն տանող այլընտրանքային երկու ճանապարհ կար՝ մեկը Մեղրիով, որ բավականին երկար էր, ուրեմն ծախսատար, մյուսը՝ Գեղանուշ գյուղի հարակից անտառով, որը դժվարանցանելի էր ու անհարմար: Երկու կարծիք լինել չէր կարող, որ ավանդական Կապան-Ճակատեն ճանապարհի գերակշիռ հատվածին այլընտրանքային մի ճանապարհ պիտի կառուցվեր, հնարավորինս սեղմ ժամկետում և որակով:

Խնդրի հրատապությունից էլնելով հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը մի անձից գնում կազմակերպեց, նախագծողներին անմիջապես հանձնարարվեց նախագիծ պատրաստել:

Այլընտրանքային ճանապարհի շինարարությանը ձեռնամուխ եղավ «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերությունը: Ընդ որում՝ նոր ճանապարհը պիտի ունենար 7 կմ 470 մետր երկարություն: Ըստ պայմանագրի՝ շինարարության ավարտ էր սահմանված այս տարվա նոյեմբերի 10-ը, ինչն իրականացրին կապանցի ճանապարհաշինարարները:

Նոյեմբերի 8-ին արգելափակոցներով, նշագծումներով նոր ճանապարհահատվածը հանձնվեց շահագործման:

Նոյեմբերի 23-ին առիթ եղավ երթնեկել նորակառույց ճանապարհով, ինչը հնարավորություն տվեց փոքրիշատե պատկերացում կազմել կատարված աշխատանքների մասին, իսկ մյուս մանրամասներն արդեն հայտնի դարձան ընկերության գլխավոր ճարտարագետ Սերգեյ Առուստամյանի հետ զրույցից:

Նախ՝ մեր զրուցակիցը բազմահմուտ ճանապարհաշինարար է, 1977 թվականից է աշխատում ճանապարհաշինության ոլորտում: Մեզ հետ զրույցը սկսվեց իրենց ձեռնարկության համար հաճելի մի փաստով. նոյեմբերի 5-ին եղել է Դուբայում, որտեղ ստացել է «Կապանի ՃՇՇ» ընկերությանը շնորհված «Որակի նշան» մրցանակը: Առիթը բաց չենք թողնում հարցնելու, թե այս նոր կառուցված ճանապարհահատվածի համար է մրցանակը շնորհվել, պատասխանում է՝ նաև այո:

Ինչևէ, անցյալ աշնանը շինարարությունը սկսվելուց մեկ, մեկուկես ամիս անց նորակառույց ճանապարհն արդեն երթնեկելի էր ամենագնացների համար, երբեմն ճանապարհաշինարարն ու երթնեկող մեքենաները խանգարում էին միմյանց, բայց այդ պատկերն ամենուր է, որտեղ ճանապարհաշինություն է իրականացվում: Այս համատեքստում Սերգեյ Առուստամյանն ընկերության անունից շնորհակալություն հայտնեց Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին՝ այդ աշխատանքները կազմակերպելու նպատակով երկու հորատող մեքենա հատկացնելու համար, իսկ պայթեցումներն իրականացրել է «Ապառաժ մայնինգ» ընկերությունը: Ի դեպ, նորկառույց ճանապարհահատվածով երթնեկելիս դժվար չէր նկատել, որ շինարարները ճանապարհ են հարթել նաև քարաժայռերի միջով, ինչը վկայում է նաև Սերգեյ Առուստամյանը. «Բավականին ժայռերի հանդիպեցինք, պայթեցումներով ենք առաջ գնացել»:

Ինչպես փոխանցեց մեր զրուցակիցը, ընդհանուր առմամբ իրականացվել է մեկ միլիարդ 421 միլիոն դրամի աշխատանքներ, կատարվել 126 հազար խորանարդ մետր հանույթ, որի կեսից ավելին՝ փխրեցմամբ մշակելով: Ընդ որում՝ նախատեսված ժամկետում ավարտելու համար աշխատանքները սկսել են երկու կողմից՝ Կապանի և Ճակատենի: Իսկ շինարարական տեխնիկայի առումով խնդիր չի եղել, քանի որ օգտագործվել է նաև ԶՊՄԿ-ի տեխնիկան:

Ճանապարհն ունի ասֆալտբետոնե երկու շերտ՝ 6 սմ+4 սմ հաստությամբ:

- Քաղաքական, ռազմական, տնտեսական առումներով ճանապարհահատվածը հնարավորինս արագ պիտի կառուցվեր, իսկ դա չի՞ հանգեցրել որոշակի շտապողականության, եթե չասենք գրոհայնության,- հարցնում ենք վաստակաշատ ճարտարագետին:

- Մեղմ ժամկետն աշխատանքի որակի վրա չի ազդել, քանզի խիստ վերահսկողություն կար պատվիրատուի՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից. ճանապարհին տեղադրվող ասֆալտի յուրաքանչյուր 250 տոննայից ասֆալտի նմուշ էր տարվում լաբորատորիա՝ ստուգման, եթե մի թերություն նկատվեր՝ պատվիրատուն պարզապես կդադարեցներ վճարումները,- մանրամասնում է մեր զրուցակիցը,- բացի այդ՝ Արարատի ճանշինից հանքային փոշի ենք գնում, որ օգտագործվում է ասֆալտի արտադրության մեջ, մանավանդ վերին շերտի դեպքում, նպաստում է ծակոտկենության նվազմանը: Շինարարության մեջ օգտագործվող խիճը ևս սեփական արտադրության է ու համապատասխանում է պահանջվող չափանիշներին: Ճանապարհին

տեղադրվող ասֆալտն արտադրվում է ընկերությանը պատկանող ասֆալտգործարանում: Ի դեպ, մարզում գործող ասֆալտգործարաններից ամենահինն է: Բայց ինչպես վկայեց Սերգեյ Առուստամյանը, համապատասխանեցվել է ժամանակակից պահանջներին: Ուկրաինայից մասնագետներ են հրավիրել, ովքեր ասֆալտգործարանի խառնիչի մեջ սարքավորում են տեղադրել, որն ավտոմատ ղեկավարում է գործընթացը և արտադրանքի համամասնությունները հստակորեն պահպանում:

- Այս ձևերը յուրահատուկ «քննաշրջան» կլինի նոր կառուցված ճանապարհահատվածի համար: «Կապանի ՃՇՇ»-ն է իրականացնելու ձմեռային սպասարկումը: Այս առումով ինչպե՞ս եք գնահատում իրավիճակը:

- Ճակատենի կողմից ճանապարհի 1,5 կմ հատվածն անցնում է անտառի միջով, ինչի համար վարորդներն ուշադիր պիտի լինեն, ավելի հետևողական, քանզի այդ հատվածում ճանապարհի մերկասառույցով պատվելու հավանականությունն ավելի մեծ է: Բայց նախագծողներն այլ տարբերակ չեն ունեցել, իսկ մյուս հինգ և ավելի կիլոմետր հատվածն արևահայաց լանջով է ձգվում, այդտեղ առանձնապես խնդիրներ չեն ծագի: Ընդհանրապես ամենաօպտիմալ տարբերակը հենց այս մեկն էր, որ նախընտրվել և կառուցվել է, թեև հատվածներ կան, որ դիտարկվում են հակառակորդի կողմից, բաց եթե մեկ կիլոմետր էլ ավելի հեռու լիներ, այսօրվա ժամանակակից զինտեխնիկայի պարագայում անվտանգ լինել չէր կարող: Ճանապարհը, որ հատվածով էլ որ անցնի, հրազենով խոցելու վտանգը կա, - մանրամասնում է մեր զրուցակիցը և հավելում, որ ապահովված են ընկերությանը պատկանող ճանապարհների ձմեռային սպասարկումն իրականացնող տեխնիկայով, այլապես նման գործառույթ իրականացնելու համար պատվիրատուն պայմանագիր չէր կնքի և պատվեր չէր տա:

Սղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/kyanqi-ukhegir-statsav-kapan-chakaten-aylyntranqayin-chanaparhy>

26.11.2022

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՁՅԱՆԻ ՆՈՐ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԳՈՐԻՍՈՒՄ

Գործում այսօր տեղի ունեցավ քարտեզագետ Ռուբեն Գալյանի «Հայաստանի սահմանների 2600 տարվա պատմությունը (աշխարհագրական, քարտեզագրական և պատմական փոփոխությունները)» գրքի (Ե., Զանգակ, 2022թ., 60 էջ) շնորհանդեսը:

Գիրքը ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված ուսումնական նյութ է, որի նպատակն է Հայաստանի սահմաններով հետաքրքրված հանրությանը և հատկապես ավագ դպրոցականներին պարզ ու դյուրըմբռնելի լեզվով ու քարտեզների պատկերներով ծանոթացնել Հայաստանի սահմանների պարբերաբար փոփոխություններին և դրանց հիմնական պատճառներին: Միջոցառումը կազմակերպվել էր «Միրհավ» հյուրանոցի տնօրեն, գրքի տպագրության աջակից Շահեն Զեյթունցյանի, Ակսել Բակունցի տուն-թանգարանի և Գործիսի երկրագիտական թանգարանի համատեղ նախաձեռնությամբ:

Շնորհանդեսին ներկա էին Գործիսի մտավորական հանրույթի ներկայացուցիչները, մանկավարժներ, աշակերտներ, ուսանողներ:

Բացման խոսք ասաց Բակունցի տուն-թանգարանի վարիչ Վարդան Սարգսյանը՝ ներկայացնելով օրվա հյուրին՝ գրքի հեղինակ, քարտեզագետ Ռուբեն Գալյանին, խոսելով

հանդիպման նշանակության ու կարևորության, գրքի արժանիքների, ինչպես նաև պատմաքաղաքական արդի մարտահրավերների մասին:

Ռուբեն Գալյանի քարտեզագիտական հետաքրքրությունների լայն շրջանակի և բացառիկ աշխատությունների մասին խոսեց նաև Շահեն Զեյթունցյանը՝ բարձր գնահատելով Գալյանի՝ իր վաղեմի բարեկամի, հիանալի հայի ավանդը Հայաստանի քարտեզագրության ոլորտում, ինչի համար նա արժանացել է բարձր պարգևների:

Այնուհետև բովանդակալից բանախոսությամբ հանդես եկավ Ռուբեն Գալյանը՝ խոսելով գրքույկի մասին, որ գիտական աշխատանք չէ, այլ պարունակում է գիտահանրամատչելի պատմաաշխարհագրական տեղեկություններ ու հիմնականում քարտեզներ, որոնցում կարելի է տեսնել Հայաստանի գոյության և նրա սահմանների վերաբերյալ բոլորին հետաքրքրող հարցերից մի քանիսի պատասխանները: Ավելի քան քառասուն տարի զբաղված լինելով հատկապես մեր տարաշաշրջանի քարտեզներով՝ Գալյանը տարբեր աղբյուրներից ու երկրներից հավաքել է բազմաթիվ քարտեզներ ու քարտեզագրական տեղեկություններ, որոնց մի մասը տեղ է գտել նրա հրատարակած ութ աշխատություններում: Դրանց թվում են՝ Ադրբեջանի, Թուրքիայի ու Հայաստանի միջև գոյություն ունեցող պատմական, աշխարհագրական ու մշակութային խնդիրներն ու մշակութային հակասությունները, որոնք նաև բացահայտում են հարևանների պատմական խեղաթյուրումներն ու զեղծարարությունները: Բանախոսը սահիկաշարով ներկայացրեց պատմական համառոտ տեղեկություններ՝ քարտեզներին կից տալով կարևոր բացատրություններ տվյալ քարտեզի հեղինակի ու ցուցադրած նյութի կամ դրանց հետ կապված խնդրահարույց հարցերի վերաբերյալ: Քարտեզները ներառում են Միջին Արևելքի և Կովկասի շրջանները, այսինքն՝ այն տարածքը, որի մեջ է նաև Հայաստանը՝ հնամենի ու ներկայիս երկիրը:

Բանախոսության ավարտին հեղինակին ուղղվեցին հետաքրքիր հարցեր, եղան առանձին դիտարկումներ: Ներկաները շնորհակալություն հայտնեցին Գալյանին՝ կատարած հայրենանվեր աշխատանքի, քարտեզագրական ու պատմաաշխարհագրական կարևոր աշխատությունների, այն աշխատատար ջանքերի համար, որ ներդրել է հայ քարտեզագրության ոլորտում՝ վեր հանելով արդի խնդիրներն ու քննարկելով դրանց լուծման հնարավոր ուղիները:

Աղբյուրը՝

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid028UjKWGt7dnGVCC9wucx4x8qx117iH47tapNReGLR9XpEVMY1zyyxPtfHhTz8N7s6l&id=100057409122759

25.11.2022

ԴԱՍԸՆԹԱՑ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Այսօր Սյունիքի մարզպետարանում ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոսական թիմը և փորձագետներն անցկացրեցին դասընթաց «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ինտեգրումը մարզային և համայնքային զարգացման ռազմավարություններում» թեմայով. մասնակցում էին մարզպետարանի տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև մարզի համայնքապետարանների ներկայացուցիչներ:

Դասընթացի ընթացքում ներկայացվել են Հայաստանում կլիմայի փոփոխությանը և կլիմայի փոփոխության ռիսկերին ու խոցելիությանը, կլիմայական ռիսկերի նկատմամբ խոցելիության ոլորտային գնահատումների արդյունքներին (գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, զբոսաշրջություն), համայնքային մակարդակում կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանավորմանը, տարածքային (մարզային) զարգացման ռազմավարություններում կլիմայի փոփոխության հարմարվողականության և կլիմայական ռիսկերի կառավարման նկատառումների ինտեգրմանը վերաբերող հարցեր:

Դասընթացի արդյունավետության աստիճանը պարզելու նպատակով դասընթացի սկզբում և ավարտին ներկաները թեստ լրացրեցին:

Վերապատրաստումից հետո մասնակիցները հնարավորություն ունեցան նաև գնահատելու ծրագիրը, ներկայացնելու իրենց առաջարկություններն ու կարծիքները:

Ավարտին մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր:

Աղբյուրը՝ <http://syunik.mtad.am/news/item/2022/11/25/dasyntyac/>

25.11.2022

Գևորգ Փարսյանը ընդունել է Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսին

Նոյեմբերի 25-ին Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը ընդունել է Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինին:

Ողջունելով միմյանց՝ զրուցակիները բարձր են գնահատել երկու ժողովուրդների միջև ձևավորված ջերմ ու բարեկամական հարաբերությունները, պատմամշակութային ընդհանրությունները, ինչը նաև լավ հիմք է հարաբերությունների ներկա մակարդակն առավել բարձրացնելու, տարբեր ոլորտներում համագործակցությունն առավել ընդլայնելու և ամրապնդելու ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկելու համար: Այս համատեքստում կարևորվել է նաև տարբեր մակարդակներում շփումների և հանդիպումների պարբերականության ապահովումը:

Ի թիվս մի շարք այլ ոլորտների՝ հանդիպմանը առանձնահատուկ ընդգծվել է հատկապես առևտրատնտեսական փոխգործակցության ներուժի լիարժեք օգտագործման ուղղությամբ ջանքերի ներդրումը, և այս առումով կարևորվել է տեղի տնտեսվարողների համար գործունեության առավել բարենպաստ պայմաններ ստեղծելը:

Կողմերը համագործակցության կարևոր ուղղություններից մեկն են համարել նաև մշակույթի ոլորտը: Նշվել է, որ առաջիկայում հյուպատոսի նախաձեռնությամբ Կապանում կկայանա ցուցահանդես:

Անդրադարձ է եղել Կապանի և իրանական որևէ քաղաքի միջև քույր քաղաքների հարաբերությունների հաստատմանը առնչվող հարցերին: Աբեդին Վարամինը առաջարկել է դիտարկել Էսֆահանի (Սպահան)՝ որպես արդյունաբերական, գիտական, մշակութային ավանդույթներով հարուստ քաղաքի և Կապանի՝ քույր քաղաքներ հռչակելը, ինչը դրական արձագանքի է արժանացել:

Հանդիպման ավարտին գրուցակիցները որոշել են պարբերական բնույթ հաղորդել իրենց հանդիպումներին՝ համագործակցությունը տեղափոխելով առավել առարկայական դաշտ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/187675500469907>

22.11.2022

Պետական աջակցություն՝ սահմանամերձ գյուղական բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու համար

Ծրագրի շրջանակում ֆինանսական աջակցություն է տրամադրվում հիփոթեքային վարկի մայր գումարի մինչև 16 մլն դրամի և դրա գծով մինչև 13% տոկոսադրույքի չափով հաշվեգրվող տոկոսագումարների մարման համար:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/11/23/petakan_ajakctutyun/

23.11.2022

Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհի հողային աշխատանքներն ավարտական փուլում են

Գորիս-Կապան միջպետական (Մ-2) ճանապարհին այլընտրանք հանդիսացող Կապան-Տաթև-Շինուհայր ավտոճանապարհի ծանրաբեռնվածությունը թոթափող՝ Վերին Խոտանան գյուղը շրջանցող ճանապարհի շինարարությունը նախատեսել էինք լուսաբանել շաբաթներ առաջ, բաց միայն հոկտեմբերի 25-ին հնարավորություն ունեցանք այցելել ճանապարհաշինարարներին: Նպատակ էինք դրել ծանոթանալ «ՎԻ ԵՄ ՎԻ քամփնի» ընկերության (տնօրեն՝ Վահան Խալոյան) ճանապարհաշինարարների գործունեությանը: Ընկերություն, որը 11 կմ երկարությամբ ճանապարհի հողաշինական աշխատանքներն է կատարում, որ սկսվել է 2021 թ. դեկտեմբերի 10-ին:

Ասֆալտապատ ճանապարհից թեքվեցինք դեպի աջ և առաջինը հանդիպեցինք «Ապառաժ» ՄՊ ընկերության շինարարներին, ովքեր ջրահեռացման աշխատանքներ են կատարում: Հակիրճ գրույցից հետո շարունակեցինք ճանապարհը...

«ՎԻ ԵՄ ՎԻ» ընկերության աշխղեկ Միրզազան Բեգլարյանը, ում հանդիպում ենք «Հալդի քոնսալդ» ՄՊ ընկերության տեխնիկական հսկիչ Էրիկ Թումանյանի հետ, թեև երիտասարդ տարիքին՝ նոր մարդ չէ ճանապարհաշինության ոլորտում: Տասը տարի աշխատել է Ռուսաստանի Դաշնությունում, երեք տարի է՝ «ՎԻ ԵՄ ՎԻ» ընկերությունում է: Նախ տեղեկացնում է, որ ապահովված են ժամանակակից տեխնիկայով, անհրաժեշտ կադրերով, դժվարություններ եղել են եղանակի հետ կապված (հիշենք՝ այս տարվա մարտի կեսերին այս կողմերում տեղացած մոտ մեկ մետր բարձրությամբ ձյունը): Պատահել է՝ իրենց արած գործին ձնհալի ջրերը, անձրևաջրերը մեծ վնաս են հասցրել...

Ինչևէ, տղաների հետ գրուցելուց և որոշակի տեղեկություններ ստանալուց հետո ճանապարհաշինարարների «կենտրոնակայանից» շարժվում ենք դեպի շինարարության վերջնակետը, այնտեղ, որտեղ նոր բացված ճանապարհը (առայժմ հողածածկ) հատվում է Վերին Խոտանան-Տանձավեր ճանապարհի հետ:

Աշնանային երանգներով բռնկված բնությունը, արևոտ օրը նույնքան տրամադրող են, որքան ճանապարհաշինարարների կատարած գործը: Ընթանում ենք լայնահուն

ճանապարհով: Ճանապարհին տրված բնորոշումը բնավ էլ հավուր պատշաճի ասված խոսք չէ, այլ միանգամայն համապատասխանում է իրականությանը:

Որոշ տարածություն անցնելուց հետո մետաղյա խողովակներ ենք տեսնում ճամփեզրին: Պարզվում է՝ այս ճանապարհի շինարարությունում երեք կազմակերպություն է աշխատում, բացի վերը նշած «Ապառաժից» այստեղ է նաև Աբովյանի գազամատակարարման ձեռնարկությունը, որն անց է կացնում ճանապարհը հատող գազախողովակները (երկու տեղում):

«Աշխատանքներն այնպես ենք կազմակերպել, որ մեկս մյուսին չխանգարենք», - հավաստիացնում են մեր ուղեկիցները:

Ինչևէ, ոչ միայն ճանապարհն է հնարավորինս լայնացվել, այլև դրան հարակից լեռնալանջերը «քերվել» են, որ քարաթափության դեպքերը հասցվեն նվազագույնի: Հասնում ենք մի տեղանքի, որտեղ ճանապարհը քարաժայռի միջով է անցնում. դժվար չէ կռահել, որ պայթեցումների շնորհիվ է գործը գլուխ եկել:

«Տեղանքներ կան, որ ժայռային կարծր զանգվածների ենք հանդիպել, պայթեցումներով ենք առաջ գնացել: Ճանապարհի սկզբնամասից՝ յոթերորդ կիլոմետրի հատվածում մոտ 17-18 մետր իջել ենք, հետո լիցք պիտի կատարենք: Իսկ այնտեղ, որտեղ կարող է պայթեցումը թուլացնել ժայռը՝ հետագայում քարաթափության պատճառ դառնալով, օգնության է եկել հիդրավլիկ մուրճը: Դրանով է ճանապարհի ժայռոտ կողը տեսքի բերվել», - մանրամասնում է աշխույժը:

Այս համատեքստում մեր զրուցակիցը գնահատանքի խոսք է ուղղում աշխատանքային տեխնիկան սպասարկողներին. «Եթե ոչ ամեն օր, ապա օրումեջ փչանում էր հիդրավլիկ մուրճը, բայց սպասարկողները չեն թողել, որ տեխնիկան մի ժամից ավելի կանգնի»:

Տեղեկանում ենք այլ մանրամասների. Վերին Խոտանան-Տանձավեր ներկայիս գործող ճանապարհի ոլորաններն ավելի շատ են, քան այս կառուցվողինը: Բացի այդ՝ անտառային հատվածներ կան, որոնք ձմռանը խնդիրներ են ստեղծում երթևեկության համար: Գործող ճանապարհը ձգվում է բարձրադիր գոտիով, որտեղ մառախլապատ եղանակն ավելի հավանական է...

Իսկ կառուցվող ճանապարհը ձգվում է ծովի մակարդակից 1200-1500 մետր բարձրությամբ, ուստի ճանապարհի սառցակալումն ու մառախուղը նվազ հավանական են: Համեմատության համար նշենք, որ ներկայումս կառուցվող Տաթև-Լձեն ճանապարհի՝ ծովի մակարդակից ամենաբարձր կետը 2150 մետր է:

Էրիկը հսկում է աշխատանքների ընթացքը, դրանց որակը, որ ամեն ինչ կատարվի ըստ նախագծի և սահմանված նորմերի, թե որ «պիկետաժում» ճանապարհը որքան պիտի իջնի, որքան բարձրանա: Հընթացս հետաքրքրվում ենք, թե որպես մասնագետ, ի՞նչ գնահատական կտա արվածին:

«Գնահատականը վերադասը կտա, - պատասխանում է, - գերազանց չեմ ասի, լավ»:

Զրուցակիցս նաև այլ մանրամասներ է հաղորդում. նոր կառուցվող ճանապարհը նախորդից կարճ է լինելու 700 մետրով, երթևեկելու համար ավելի կարճ ու հարմար և ամենակարևորը՝ ոլորաններն ու շրջադարձերն ավելի քիչ են: Հիշենք, թե միայն Վերին Խոտանան գյուղի եկեղեցու մոտ գտնվող շրջադարձն ինչ խնդիրներ է ստեղծում վարորդների համար, երբեմն-երբեմն կաթվածահար անում միջպետական համարվող ճանապարհով

երթնեկելը: Բացի այդ՝ հսկա բեռնատարների աղմուկն անհարմարություններ է ստեղծում Վերին Խոտանանի բնակիչների առօրյայում, խախտում նրանց անդորրը:

Այնուհետև՝ կառուցվող ճանապարհի ամենամեծ թեքությունն ինը տոկոս է, ինչը միանգամայն տեղավորվում է ճանապարհաշինական նորմերի մեջ: Եվ դեռ ասֆալտապատումից հետո նշված թիվը կարող է մեկ տոկոսով իջնել: Այլևս չխոսելով այն մասին, որ նորակառույց ճանապարհը ձգվում է գեղատեսիլ տեղանքով և առանձին մի հաճույք է այդտեղով երթնեկելը:

Մնում է հուսանք, որ «ՎԻ ԵՄ ՎԻ» ընկերությունը շրջանցիկ ճանապարհին կատարվող աշխատանքներն ավարտին կհասցնի դեկտեմբերի սկզբին:

Եվ մի պատմական անդրադարձ. 1992-94 թթ. Արցախյան առաջին պատերազմի օրերին Գորիս-Կապան միջպետական (Մ-2) ճանապարհը հակառակորդը շրջափակել էր, և Կապան-Տաթև- Շինուհայր խճուղին դարձել էր յուրօրինակ «Կյանքի ճանապարհ»:

Ցավալի է, որ պատմությունը կրկնվում է՝ մեզ համար տխուր վերջաբանով...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/verin-khotanany-shrjantsokh-chanaparhi-hokhayin-ashkhatanqner-n-avartakan-pulum-en>

16.11.2022

Հետազոտություններ Սյունիքում

Շուրջ 170 սյունեցիներ անվճար հետազոտվել են ԻՀԱԿ շարժական բուժախտորոշիչ կլինիկայում Սյունիքի մարզի շուրջ 170 բնակիչներ նոյեմբերի 14-15-ը անցել են անվճար հետազոտություններ:

ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի, վիրուսային հեպատիտներ Բ-ի և Ց-ի անվճար, անանուն և գաղտնի հետազոտություններն անցկացվել են ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի բուժախտորոշիչ կլինիկայում:

Սիսիան քաղաքում անվճար հետազոտություն է անցել 70, Գորիսում՝ 96 քաղաքացի:

Կենտրոնի մասնագետները քաղաքացիներին նաև խորհրդատվություն են տրամադրել՝ կարևորելով հետազոտություններն ու հիվանդությունների վաղ ախտորոշումը՝ հետագա բարդություններից խուսափելու համար:

«Անհրաժեշտ է հետազոտվել՝ անկախ որևէ գանգատի առկայությունից, որովհետև նշված վարակները սկզբնական շրջանում ընթանում են առանց որևէ ախտանշանի», -նշել է «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության մասսայականացում» ծրագրի համակարգող Լիլիթ Դավթյանը՝ հավելելով, որ հանրային նման միջոցառումների նպատակներից մեկը տեղեկատվության տրամադրումն ու քաղաքացիների իրազեկվածության բարձրացումն է:

Քաղաքացիները գոհունակություն են հայտնել նախաձեռնության համար՝ ակնկալելով նման միջոցառումների հաճախակի իրականացում:

Նախաձեռնությունն իրականացվել է ՌԴ կառավարության կողմից ֆինանսավորվող ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի միացյալ ծրագրերի աջակցությամբ՝ «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության մասսայականացում» ծրագրի շրջանակներում:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/hetazotutyunner-syuniqum?fbclid=IwAR11cpXrKg2pkLwdImBs4UWy5b4cSc7UpwjukEL88TiBYFdPnqi-VHAngyQ>

15.11.2022

**ՀՀ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՆՁԻՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ**

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ Սյունիքի մարզում ներքոնշյալ ծրագրերի և միջոցառումների իրականացման նպատակով կհատկացվի շուրջ 21.1 մլրդ դրամ:

Մասնավորապես՝

1. Ճանապարհային ցանցի բարելավում ծրագրի շրջանակներում՝

• «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի Սիսիան-Քաջարան 60կմ-ի համակարգում և կառավարում» միջոցառման իրականացման համար՝ 2.8 մլրդ դրամ,

• «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի Քաջարանի թունելի և մոտեցումների համակարգում և կառավարում» միջոցառման իրականացման համար՝ 1.2 մլրդ դրամ,

• «Եւ աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում Սիսիան-Քաջարան 60կմ ճանապարհահատվածի կառուցում» միջոցառման իրականացման համար՝ 8.2 մլրդ դրամ:

2. Սյունիքի մարզի համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու նպատակով կհատկացվի 4.7 մլրդ դրամ (Գորիս համայնքին՝ 859.6 մլն դրամ, Կապան համայնքին՝ 1.8 մլրդ դրամ, Մեղրի համայնքին՝ 339.3 մլն դրամ, Տաթև համայնքին՝ 200.6 մլն դրամ, Սիսիան համայնքին՝ 1.2 մլրդ դրամ, Տեղ համայնքին՝ 156.1 մլն դրամ և Քաջարան համայնքին՝ 227.5 մլն դրամ):

3. «Առողջապահական կազմակերպությունների կառուցում, վերակառուցում» միջոցառման շրջանակներում «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի համար կհատկացվի 700.7 մլն դրամ,

4. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքերի կառուցում» միջոցառման շրջանակներում «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի համար կհատկացվի 624.5 մլն դրամ,

5. «Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում» միջոցառման շրջանակներում Տեղ համայնքի Սբ Գևորգ եկեղեցու վերականգնման համար կհատկացվի 30 մլն դրամ,

6. «Մոդուլային» տիպի մանկապարտեզների շենքային ապահովում» միջոցառման շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի համար կհատկացվի 335.7 մլն դրամ,

7. «Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում» միջոցառման շրջանակներում թվով 16 դպրոցների համար կհատկացվի՝ 1.7 մլրդ դրամ,

8. Սյունիքի մարզպետարանին՝ «ՀՀ Սյունիքի մարզում տարածքային պետական կառավարում» ծրագրով նախատեսվել է 609.5 մլն դրամ:

9. «Ավագ մակարդակի կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում» և «Հանրակրթական դպրոցների գույքով և տեխնիկայով ապահովում» ծրագրերի շրջանակներում նախատեսված է համապատասխանաբար՝ 20 մլն դրամ և 150 մլն դրամ:

10. Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագրի շրջանակներում «Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» միջոցառման իրականացման համար, որպես ընթացիկ սուբվենցիաներ Սյունիքի մարզպետարանին կտրամադրվի 19.8 մլն դրամ:

Աղբյուրը՝

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0Rn9ucqvemRa2z4649LhXZan9RLasQafG7BCaZ1gLoJKVqpkmtmymRjJ1H2qYSFP4RI&id=100070087877701

13.11.2022

ԿԱՊԱՆՅԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿՈՐԿՈՏԻ ՓԱՌԱՏՈՆԸ՝ ՇԻԿԱՀՈՂՈՒՄ

Նոյեմբերի 13-ին Սյունիքի մարզպետի տեղակալներ Հայկ Հարությունյանն ու Նարե Դազարյանը Կապան համայնքի Շիկահող գյուղում մասնակցեցին արդեն երրորդ տարին անցկացվող «Կորկոտի փառատոնին»:

Փառատոնը նպատակ ունի տարածաշրջանի ավանդական կորկոտը կապանյան խոհանոցի այցեքարտը դարձնել: Նախաձեռնողն ու կազմակերպիչը Կապանի համայնքապետարանն է:

Համայնքի գյուղական բնակավայրերն ու նախադպրոցական ուսումնական հաստատությունները ներկայացել էին ազգային ուտեստներով լի սեղաններով, փառատոնի գեղարվեստական մասն ապահովեց Կապանի մշակույթի կենտրոնը, իսկ կորկոտի լավագույն վարպետ տիտղոսի համար մրցում էր 14 խոհարար:

Առատության ու լիության խորհրդանիշ ուտեստի՝ կորկոտի համտես, համերգային և սպորտային միջոցառումներ, թեյախմություն. սահմանամերձ Շիկահողում աշխույժ ու կոլորիտային մթնոլորտ էր: Սա միասնականության ևս մեկ դրսևորում էր՝ ցույց տալու, որ սահմանին ապրող գյուղացին միայնակ չէ:

Իսկ այս տարվա փառատոնի լավագույն կորկոտ պատրաստող ճանաչվեց Արամայիս Փարամազյանը:

Հավելենք, որ կորկոտը ներառվել է ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում՝ որպես կապանյան ավանդական ուտեստ:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/11/13/korkoti_paraton/

11.11.2022

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼ Է ՇԱՐԺԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն այսօր հյուրնկալել է ֆրանսիական «Elise Care» առողջապահական բարեգործական կազմակերպության ծրագրերի ղեկավար Դարա Թահային ու Հայաստանում կազմակերպության մարդասիրական առաքելության ղեկավար Արմեն Թաշիին:

Նրանց այցի նպատակն էր ներկայացնել առողջապահական այն նախագիծը, որը նախատեսում են իրականացնել Սյունիքում. «Elise Care»-ը մարզում կտեղադրի շարժական կլինիկա՝ հագեցած բժշկական սարքավորումներով, դեղորայքով ու մասնագետներով, որը կշրջի եւ անվճար առողջապահական ծառայություններ կմատուցի այն բնակավայրերում, որտեղ կլինի դրա կարիքը: Նման կլինիկա ամռանը կազմակերպությունն արդեն գործարկել է Շիրակում:

Սյունիքի մարզպետը շնորհակալություն հայտնեց նախաձեռնության համար ու վստահեցրեց, որ թե՛ մարզային իշխանությունները, թե՛ մարզի առողջապահական հիմնարկները պատրաստ են աջակցել ու սերտորեն համագործակցել կազմակերպության հետ՝ կլինիկան հնարավորինս շուտ մարզում տեղադրելու եւ նրա արդյունավետ գործունեությունն ապահովելու համար: Ռ.Ղուկասյանը կարեւորեց կլինիկայի այցերը հատկապես սահմանամերձ բնակավայրեր: «Այն, ինչ անում եք մարզի համար, հույժ կարեւոր է ու այս պահին պահանջված», - ասաց նա:

Հյուրերը հակիրճ ներկայացրեցին նաեւ «Elise Care» կազմակերպությունը. այն Փարիզում 2012-ին հիմնադրել է ֆրանսահայ բժիշկ ու բարերար Էլիզ Պողոսյանը, եւ առողջապահական գործունեություն է ծավալել պատերազմական գոտիներում՝ հրատապ բժշկական ու հոգեբանական օգնություն տրամադրելով մարդկանց:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/11/11/sharjakan_klinika/

10.11.2022

Ընտրություններից 50 օր հետո անգամ Միսիանում չի ձևավորվում համայնքային իշխանություն

Միսիան համայնքի ավագանու 2022 թ. սեպտեմբերի 25-ին տեղի ունեցած ընտրության արդյունքում ավագանու անդամի մանդատ ստացան «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու երկիր», «Աշխատանք և արդարություն», «Մեկ Հայաստան» և «Հանուն հանրապետության» կուսակցություններն ու դաշինքները:

Հոկտեմբերի 12-ին կայացած Միսիանի նորընտիր ավագանու առաջին նիստում՝ համայնքի ղեկավարի ընտրության երկրորդ փուլում համայնքի ղեկավար ընտրվեց «ՔՊ» կուսակցության ներկայացուցիչ Արմեն Հակոբջանյանը, ով վերջին գրեթե մեկ տարում համայնքապետի պաշտոնակատարն էր: Նա 9 կողմ ձայնով հաղթեց «Աշխատանք և արդարություն» դաշինքի ներկայացուցիչ Հայկ Առաքելյանին, ով ստացել էր 7 կողմ ձայն:

Արմեն Հակոբջանյանի հաղթանակը որոշեց «Հանուն հանրապետության» դաշինքի անդամ Նախշուն Յուզուլյանի դիրքորոշումը:

Համայնքի ղեկավարի ընտրության նիստը բոյկոտել էր «Ապրելու երկիր» կուսակցությունը. Կուսակցության նախ ընտրական ցուցակը գլխավորող Արա Զաքարյանը տարածել էր հայտարարություն, թե վայր են դնում ստացած 4 մանդատը:

Այնուհետև մանդատները վայր դնելու մասին հայտարարություն տարածեցին «Աշխատանք և արդարություն», «Մեկ Հայաստան» խմբակցությունները (երկու այդ խմբակցությունն ունի 7 մանդատ):

Արդյունքում՝ ավագանու 21 անդամից մանդատը (ըստ տարածված հայտարարությունների) վայր դրեցին 11-ը:

Եվ համայնքի ընտրված ղեկավար Արմեն Հակոբջանյանի երդման արարողությունն այդպես էլ չկայացավ ու չի կայանում՝ քվորում չլինելու պատճառով: Դա նշանակում է, որ Արմեն Հակոբջանյանը չի կարողանում ստանձնել համայնքի ղեկավարի պարտականությունները:

Այսպիսով՝ եթե համայնքում ավագանին ձևավորված չէ, եթե համայնքի ղեկավարը չի կարողանում ստանձնել իր պարտականությունները, ապա ինչու՞ կառավարությունը համայնքի ղեկավարի պաշտոնակատար չի նշանակում:

Պատճառն ըստ էության այն է, որ «Աշխատանք և արդարություն» ու «Մեկ Հայաստան» ուժերի ներկայացուցիչները թեև հայտարարել են մանդատները վայր դնելու մասին, բայց (ի տարբերություն «Այրելու երկիր» կուսակցության ներկայացուցիչների) մինչև հիմա այդ մասին դիմումներ չեն ներկայացրել ընտրական հանձնաժողով:

Հաջորդ հարցը, որ հիմա քննարկվում է Միսիանում, հետևյալն է՝ հնարավո՞ր է, որ Արմեն Հակոբջանյանը կրկին նշանակվի համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև համայնքի ավագանու նոր ընտրություններ, որը հավանաբար տեղի կունենա 2023-ի գարնանը:

Անշուշտ, հնարավոր է, որ Արմեն Հակոբջանյանը նշանակվի Միսիան համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, եթե ինքը նույնպես հրաժարվի ավագանու անդամի մանդատից: Այդ դեպքում նոր գործընթաց կսկսվի՝ առավել անորոշ հեռանկարով:

Այդ բոլորով հանդերձ՝ շատ տարօրինակ է, որ ծանրագույն մեր ժամանակներում, թշնամական Ադրբեջանի հետ ամենաերկար սահմանն ունեցող Միսիանում չկա ձևավորված և լեգիտիմ համայնքային իշխանություն:

Իսկ ինչու՞ է Միսիանում նման արտառոց իրավիճակ և վերջը չերևացող անհամերաշխության ու անմիաբանության մթոլորտ ստեղծվել. դա արդեն խոսակցության առանձին թեմա է, բայց խնդիրների խնդիրը շարունակում է մնալ համերաշխության վերականգնումը...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/yntrutyunnerits-50-or-heto-angam-sisianum-chi-dzevavorvum-hamaynqayin-ishkhanutyun>

04.11.2022

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ՝ ՄԻԱՄԻՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Նոյեմբերի 4-ին Կապանում անցկացվեց «Միասին Սյունիքի համար» աշխատաժողովը, որն առաջին անգամ նախաձեռնել ու կազմակերպել էր Սյունիքի մարզպետ տարանը:

Միջոցառմանը մասնակցում էին Սյունիքի մարզում ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպություններ ու ՀՀ-ում հավատարմագրված ղեսպանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, մարզպետարանի այլ պաշտոնյաներ, ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը, այլ պետական կառույցների պաշտոնյաներ, Սյունիքի մարզի համայնքների ղեկավարները:

Նման ձևաչափով առաջին անգամ անցկացվող աշխատաժողովի նպատակն էր բարձրացնել փոխադարձ համագործակցության արդյունավետությունը տարածքային կառավարման մարմնի ու միջազգային դոնոր կազմակերպությունների միջև, հիմնել մի հարթակ, որը կունենա պարբերական բնույթ հետագա համատեղ աշխատանքի, տեղակատվության փոխանակման, ծրագրերի արդյունավետության չափման, նոր ծրագրերի գաղափարների գեներացման համար:

Աշխատաժողովի ընթացքում Սյունիքի մարզպետի խորհրդական Տարոն Ալեյանը ներկայացրել է Սյունիքի մարզի (հնգամյա կտրվածքով) զարգացման ռազմավարական ուղղությունները, որը կարող է միջազգային գործընկերների համար հիմք դառնալ՝ մարզում նախատեսվող իրենց առաջիկա ծրագրերը մշակելիս:

Դրանից հետո ներկաների միջև ծավալվել է քննարկում, որի ընթացքում միջազգային գործընկերների՝ Սյունիքի մարզի տարբեր ոլորտներին վերաբերող հարցերին պատասխանել են Սյունիքի մարզպետարանի, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, Էկոնոմիկայի նախարարության պաշտոնյաները:

Աշխատաժողովին իրենց կազմակերպությունների ծրագրային ուղղությունները, այս պահին Սյունիքում ընթացող ու առաջիկայում մարզում նախատեսվող աշխատանքները, հաստատված ներդրումային ծրագրերը ներկայացրել են ՀՀ-ում Եվրամիության պատվիրակության, ՄԱԿ-ի տարբեր կառույցների, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), Հայկական Կարմիր խաչի ընկերության ներկայացուցիչները, ՀՀ-ում Շվեյցարիայի Համադաշնության դեսպանատան առաքելության ղեկավարի տեղակալ Վերներ Թուտը:

Եղան նաև հարց ու պատասխան, քննարկումներ՝ ուղղված գործընկերության արդյունավետության բարձացմանը:

Միջոցառման արդյունքներն ամփոփել է Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/11/04/Together_For_Syunik/

Կազմող՝ Ս. Ալավերդյան